## ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

*Գիտությունը հետևողական և ինքնամոռաց որոնումների արվեստ է, ճշմարտության հայտնագործման դժվարին արվեստ, ինքը գիտնականը՝ ստեղծագործող և արվեստագետ, աղգային ոգու և հանրային եսի դրսևորումների ու տվայտանքների մեկնաբան, միայն թե նրա երկասիրությունների մեջ էականը ճշգրիտ համադրումներն ու խորիմաստ բացահայտումներն են, հետևողական աշխատանքի նախանձելի դրսևորումները, մինչդեռ բուն գեղարվեստական երկին հատուկ են տիպերն ու կերպարները, այլաբանական պատկերները, տարերային ընկալումներն ու հուզական շեշտերը։*

*Գիտնականն էլ, իսկ մեր խոսքը բնատուր շնորհով օժտված գիտության իսկական աշխատավորի մասին է և ո՛չ ինքնացուցադրման վարպետների (որոնք պատրաստ են մեկնաբանելու ուզածդ գրողին, ցանկացածդ դարաշրջանն ու պրոբլեմը), ունի իր նախասիրությունները, իր սիրելի քերթողները, մեկը կամ մի քանիսը, և վերջինների բանաստեղծական աշխարհում էլ, լայնքով ու խորությամբ, ծավալում է իր որոնումներն ու հայտնությունները։ Այդ հեղինակներին նրանք ընտրում են տակավին դպրոցական նստարանից և այնուհետև ամբողջ կյանքում դառնում նրանց բագինների անդավաճան սպասարկուն և ուխտավորը, նրանց հոգեհարազատ պատգամների թարգմանը։*

*Այդպիսի լուրջ ու խոհուն գրականագետ-արվեստագետների թիվը շատ չէ մեզանում, և մեր հետագա խոսքը պիտի լինի նրանց լավագույն ներկայացուցչի՝ ակադեմիկոս Էդվարդ Մկրտչի Ջրբաշյանի մասին, որի ծննդյան 60 տարին լրացավ վերջերս։*

*Ջրբաշյանի նախասիրած հեղինակները նախ և առաջ Թումանյանը, Տերյանն ու Չարենցն են, ապա և Իսահակյանը, Մեծարենցը։ Բայց հոբելյարը հայոց նոր ու նորագույն շրջանի բանաստեղծության խորունկ գիտակ ու մեկնաբան լինելուց բացի, նաև ժամանակակից գրականագիտական ու տեսական մտքի ականավոր ներկայացուցիչներից է, գեղարվեստի ընդհանուր օրինաչափությունների բացահայտող և տեսական խնդիրների լուծող։ Նրա գրքերի ու դասախոսությունների միջոցով յուրացնելով գրականագիտության այբուբենը՝*

հազարավոր ուսուցիչներ ու երիտասարդ գիտաշխատողներ այսօր հաջողությամբ գործում են Սովետական Հայաստանի ուսումնական և գիտական հաստատություններում, իրենց ուսուցչի մտքերն ու հայացքները տարածում։ Խորհրդային գիտնականի համար սա մեծագույն երջանկություն է։

Գիտական ու մանկավարժական արդյունաշատ գործունեությունն սկսելուց առաջ Ջրբաշյանը ևս, ուրիշների նման, եղել է աշակերտ և ուսանող, գիտական աստիճանների հայցվոր, մեր սուրբ հայրենիքի պաշտպանության համար անչափ թանկ վճարած զինվոր, ապա նոր՝ բազմակնճիռ պրոբլեմներ լուծող, գիտաշխատողների նոր սերնդի ուսուցանող ու դաստիարակ, հայագիտության և հայ բանասիրության բախտով ու ապագայով մշտապես մտահոգ գործիչ։

Գիտական աստիճաններ ու պատվավոր կոչումներ էդ. Ջրբաշյանը վաղուց ունի, բայց այդ բոլորը արտաքին անձնաշնորհումներ են, որոնք իր առօրյա կյանքում բացառում է Ջրբաշյան մարդը և նորից, հին ու ավանդական սովորությամբ, վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, շարունակում է հետազոտական պարապմունքները, համալսարանական դասախոսությունները, սրբությամբ կատարում պաշտոնական ու հասարակական բազմապիսի պարտականությունները, որոնց թվարկումն իսկ մեզ հեռուն կտաներ։ Եվ այնուհանդերձ՝ մի քանի կարևոր տվյալներ նրա Ծառայության ցուցակից։ 1950 թվականից էդ. Ջրբաշյանը դասախոսում է Երևանի պետական համալսարանում գրականության տեսություն, գեղագիտություն և հայ գրականության պատմություն առարկաները։ 1954 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, իսկ 1965-ին՝ դոկտորական։ 1967 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1974-ին ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1982-ին՝ նույն ակադեմիայի ակադեմիկոս։ Հիմնական աշխատանքին զուգընթաց, առաջներում, վարել է «Գրական թերթի» խմբագրի տեղակալի, «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագրի (1961—1962), «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագրի (1967—1977), գրականության ինստիտուտի տեսության բաժնի վարիչի (1966—1971) պաշտոնները։ Երբ 1972 թ. Համալսարանում կազմակերպվեց գրականության տեսության և գեղագիտության ամբիոն, էդ. Ջրբաշյանը դարձավ վերջինի հիմնադիր վարիչը։ Ամբիոնը ներկայումս վերակառուցվել է ու վերանվանվել գրականության տեսության և արտասահմանյան գրականության ամբիոն, և էդ. Ջրբաշյանը նորից նրա անփոփոխ ղեկավարն է։

Ակադեմիկոս էդ. Ջրբաշյանը հրապարակել է 12 մենագրություն և դրականագիտական-տեսական աշխատությունների ժողովածուներ, շուրջ 220 հոդված ու փոքրածավալ հետազոտություն՝ նվիրված գրականության տեսության և գեղագիտության, հայ դասական ու ժամանակակից գրականության հարցերին։ «Գրականության տեսություն» դասագրքի (առ այսօր ունեցել է հինգ հրատարակություն) և «Հայ նոր գրականություն» կոլեկտիվ աշխատության համար արժանացել է ՀՍՍՀ պետական մրցանակների (1974, 1980)։

Նոր շրջափուլ է սկսվում էդ. Ջրբաշյանի կենսագրության մեջ 1977 թ. մայիսի 11-ից, երբ դարձավ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտոր, այսինքն՝ հայոց գրականագիտական-տեսական մտքի ղեկավար։ Մասնավորապես այս տարիներին է, որ ի հայտ եկան էդ. Ջրբաշյանի՝ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման խոր հմտությունը, ստեղծագործական աշխատանքի առողջ մթնոլորտ ստեղծելու նախանձելի կարողությունը։

Մեկ առ մեկ բնութագրել հայ բանասիրության և ընդհանուր գրականագիտության մարզերում էդ. Ջրբաշյանի ծավալած հետազոտական գործունեության արդյունքները՝ հնարավորություն չունենք, ուստի բավարարվենք նրա նախասիրած բնագավառներից գեթ հիմնականներով։

Էդ. Ջրբաշյանի աշխատությունների ստվար մասը նվիրված է գրականության տեսության ընդհանուր ու ազգային խնդիրներին, գեղարվեստական մե-

բողի և ժանրերի պատմության ու տիպաբանության հարցերին։ Ընդ որում՝ այս ուղղությամբ իր տեսական հետազոտությունները նա սկսել է դեռևս ուսանողական նստարանից, որի վկան բալլադի տեսության մասին գրած փայլուն աշխատությունն է (1949)։ Հայ իրականության մեջ Էդ. Ջրբաշյանն առաջինը սաղեցնեց գրականության տեսության համակարգված դասընթաց՝ հայ բանաստեղծության ու արձակի ընձեռած նյութերի վերլուծման հիման վրա։ «Գրականության տեսություն» աշխատությունը արդեն լույս է տեսել 3-րդ հրատարակությամբ և ճանաչվել լավագույններից մեկը։ Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանն, այնուհետև, տեսական հետազոտության նյութ է դարձրել հայկական ոտանավորի բնույթն ու առանձնահատկությունները և փաստական նյութերի վերլուծմամբ հանգել նոր հետևություններ։ Այսօր ուիրապետող է նրա առաջադրած տեսությունը հայկական ոտանավորի վանկական բնույթի ու հիմնական տեսակների մասին. «Հայկական ոտանավորն իր գերակշռող բնույթով անպայման վանկական է», «Նրա հիմքը տողերի և կիսատողերի վանկային հավասարությունն է»,— գրել է նա։ Վերևում հիշատակված այս ու մյուս խնդիրներն արծարծվել են նրա մենագրական աշխատություններում և տեսական-գրականագիտական հետազոտությունների ժողովածուներում. ինչպես, օրինակ՝ «Պոեմի ժանրը սովետահայ գրականության մեջ» (1955), «Աշխարհայացք և վարպետություն» (1967), «Պոետիկայի հարցեր» (1976), «Գեղագիտություն և գրականություն» (1983) և այլն։

Գիտնականը լուրջ ներդրում ունի ազգային մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրության բնագավառում՝ նորովի մեկնաբանելով նրա պոեմների և մյուս երկերի ազգային ակունքների ու ստեղծագործական պատմության հարցերը, նրանց բովանդակության և գեղարվեստական կերտվածքի յուրահատկությունները, նրա ողջ ստեղծագործության համաշխարհային նշանակությունը։ «Միջնադարյան մեր քնարերգուներից հետո,— եզրակացրել է գիտնականը,— առաջինը Թումանյանն էր, որ հայ պոեզիան նորից հասցրեց համաշխարհային արվեստի լավագույն նվաճումների աստիճանի»։ Հովհ. Թումանյանին նվիրված նրա ուսումնասիրություններից առ այսօր առանձին գրքերով լույս են տեսել երեքը՝ «Թումանյանի պոեմները» (1964), «Թումանյանի բալլադները» (1969), «Թումանյանի պոեզիան» (նույն տարին, ռուսերեն) և մի շարք ծավալուն հոդվածներ պարբերական մամուլում և հանգուցյալ Արամ Ինճիկյանի ու իր նախաձեռնությամբ հիմնադրված «Թումանյան, հետազոտություններ և հրապարակումներ» մատենաշարի հերթական գրքերում («Թումանյանի վարպետության հարցերից»—1964 և 1969, «Թումանյանի ռեալիզմը»—1983), վերջապես՝ մի ծավալուն ուսումնասիրություն էլ «Հայ նոր գրականության պատմության» V հատորում և այլն։

Էդ. Ջրբաշյանը, այնուհետև, համակողմանի քննության է ենթարկել հայ նոր բանաստեղծության ձևավորման և զարգացման պատմությունն ու տեսությունը, XIX դ. վերջերի և XX դ. առաջին տասնամյակների արևելահայ ու արևմտահայ գրական ուղղությունները՝ իրենց գեղագիտական ու գաղափարական դրսևորումներով, ժանրային բազմազանությամբ և միջազգային առնչություններով։ Մ. Նալբանդյանի, Դ. Ալիշանի, Գ. Սունդուկյանի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի և Ռ. Սևակի կյանքի ու ստեղծագործության այլևայլ հարցերին նվիրված նրա բազմաթիվ աշխատությունները և մասնավորապես «Միսաք Մեծարենց» (2-րդ հրատ., 1977) և «Չորս գագաթ. Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց» (1982) գրքերը ընդհանրացնում ու մեկնաբանում են փաստական հարուստ նյութեր, առաջադրում թարմ և ճշգրտված հայեցակետեր ու մեծապես հարստացնում հայ բանասիրական գիտությունը։ Ներկայումս տպագրվում է գիտնականի՝ Միքայել Նալբանդյանին ու նրա ժամանակակիցներին նվիրված հետազոտությունների ժողովածուն, ուր քննության առնված խնդիրները՝ Մ. Նալբանդյանի պոեզիան, արևմտյան գրականությունների հետ ունեցած առնչությունները, հրապարակախոսական արվեստը և այլն ստացել են խորիմաստ լուծումներ։

Էդ. Ջրբաշյանի հետազոտությունների մի մասն էլ նվիրված է սովետական շրջանի հայ գրականության հարցերին, առաջին հերթին՝ Ե. Չարենցի և Ա. Բակունցի ժառանգությանը, ապա և՝ ռուս ու արևմտաեվրոպական գրականությունների հետ հայ գրականության առնչություններին։ Հիշեցնենք, որ նա Մ. Լերմոնտովի կյանքի ու ստեղծագործության, ինչպես նաև գեղարվեստական ուսմունքների պատմության (Բուալոյի, Վ. Բելինսկու, Գ. Պլեխանովի տեսական հայացքների) հեղինակավոր հետազոտող է։

Մենք դեռ չխոսեցինք հայ գրականությունն ու տեսական միտքը համամիութենական ասպարեզ հանելու ուղղությամբ Էդ. Ջրբաշյանի թափած ջանքերի մասին, որոնց վկան նրա նախաձեռնությամբ վերջին տարիներս Երևանում հրավիրված համամիութենական կոնֆերանսներն ու գիտական սեսիաներն են՝ նվիրված հայոց հին ու միջնադարյան գրականության հարցերին և ժամանակակից գրականագիտության կենսական խնդիրներին, ապա և այդ նյութերի հրատարակությունները ռուսերեն հատուկ ժողովածուներով։ Գիտական մեծ հետաքրքրություն առաջ բերեց «Ընդհանուրը և առանձնահատուկը հայ գրականության դասական ուղղություններում» թեմայով դեկուցումը, որ նա կարդաց 1979 թ. օգոստոսին Ավստրիայի Ինսբրուկ քաղաքում կայացած Համեմատական գրականագիտության միջազգային ասոցիացիայի IX կոնգրեսում։

Երկու մեծ ծրագիր ունի գիտնականը. իրականացված տեսնել Հովհաննես Թումանյանի և Վահան Տերյանի երկերի գիտական նոր և օրինակելի հրատարակությունները։ Թումանյանի երկերի ակադեմիական բազմահատորյակը (բաղկացած տասը գրքից) ներկայումս պատրաստվում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, և առաջիկա տարում, Էդ. Ջրբաշյանի ղեկավարությամբ կսկսվեն խմբագրական աշխատանքները։ Տերյանի երկերի լիակատար ժողովածուի գիտաքննական հրատարակությունը օրակարգի հարց է, և առաջին հատորը պետք է պատրաստվի Էդ. Ջրբաշյանի գործոն մասնակցությամբ։

Ցանկանք գիտնականին անսպառ եռանդ և ստեղծագործական ծրագրերի փայլուն կատարում, անձնական ու հետազոտական կյանքում լավագույն հաջողություններ։

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## Մեծարգո նոբելյար.

Սրտագին շնորհավորում ենք Ձեզ ծննդյան 60-ամյակի առթիվ։ Մաղթում ենք Ձեզ բաջառողջություն, երկարամյա կյանք և ստեղծագործական նորանոր հաջողություններ։

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳԻՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ